

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արևիկ Պետրոսյանի և Գոհարիկ Ենոքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Քաղաքացիական կացության ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին և «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է օրենքների նախագծերի փաթեթի հեղինակների մտահոգությունը՝ կապված հանրապետությունում երեխաների չգրանցված ծնունդների առկայության հետ և կարևորում դրանց՝ օրենքով կարգավորման անհրաժեշտությունը: Այդ նպատակով 2010 թվականի մարտի 23-ին Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի մոտ կայացած խորհրդակցության արձանագրության հանձնարարականի հիման վրա (արձանագրություն N 23-03-AJV-24-46 2010-06-24

Կ, 23.03.2010 թ.) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ֆիլարետ Բերիկյանի գլխավորությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում երեխաների ծնունդների գրանցման հետ կապված խնդիրները և ներկայացնել առաջարկություններ:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքների նախագծերի փաթեթի հեղինակներին առաջարկում է համագործակցել աշխատանքային խմբի հետ՝ խնդրի կարգավորման փոխադարձ ընդունելի և համապարփակ լուծումներ գտնելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Քաղաքացիական կացության ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում  
լրացումներ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Քաղաքացիական կացության ակտերի մասին Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-9 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. ՔԿԱԳ մարմնի աշխատավայրից դուրս կարող են կատարվել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով եւ դեպքերում:ե:

**Հոդված 2.** Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Երեխայի ծննդյան մասին հայտարարություն տալու անհնարինության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարությունը տալիս է երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը՝ սույն օրենքով սահմանված կարգով:ե:

**Հոդված 3.** Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «կամե բառից հետո լրացնել «երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի, կամե բառերը:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի առաջարկվող ձեւակերպմամբ սահմանել եւ հստակեցնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման դեպքերը եւ կարգը, սահմանել համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից օրենքով սահմանված կարգով երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն տալու հնարավորությունը՝ դրանով իսկ նպաստելով երեխաների ծնունդները չգրանցելու դեպքերի կրճատմանը եւ բացառմանը:

Հիշյալ լրացումները բխում են հանրային լայն շրջանակների պահանջներից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3<sup>1</sup> -րդ կետով.

«3<sup>1</sup> ) միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրացումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն. է:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ Ե ՀՀ ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի առաջարկվող ձեւակերպմամբ համայնքի ղեկավարի համար սահմանել պետության կողմից պատվիրակված լիազորություն, մասնավորապես՝ միջոցներ ձեռնարկել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրացումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալ երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն՝ դրանով իսկ նպաստելով երեխաների ծնունդները չգրանցելու դեպքերի կրճատմանը եւ բացառմանը:

Հիշյալ լրացումը բխում են հանրային լայն շրջանակների պահանջներից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5 օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) միջոցներ է ձեռնարկում իր վարչական շրջանում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրացումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի առաջարկվող ձեւակերպմամբ Երեւան քաղաքի վարչական շրջանի դեկավարի համար սահմանել լիազորություն, մասնավորապես՝ միջոցներ ձեռնարկել վարչական շրջանում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրացումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալ երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն՝ դրանով իսկ նպաստելով երեխաների ծնունդները չգրանցելու դեպքերի կրճատմանը եւ բացառմանը:

Հիշյալ լրացումը բխում են հանրային լայն շրջանակների պահանջներից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի «համարե բառից հետո լրացնել», բացառությամբ երեխայի ծննդի պետական գրանցման դեպքերի, և բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Պետական տուրքի մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի առաջարկվող ձեւակերպմամբ հստակեցնել, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից դուրս երեխայի ծննդի պետական գրանցման դեպքում պետական տուրք չի գանձվում: